

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Ֆ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Վաղարշապատ, 10 յուլիսի 1901 թ.

Շատ հետաքրքրական հարց է դրել «Մուրճը»՝ բժիշկների գալու գնալու կամ նրանից խուսափելու մասին:

«Գալու գնալու» հարցը ճանաչելի անգամներ լրագրության արձարձման առարկայ է եղել եւ ոչ մի անգամ վերջնական լուծում չէ ստացել: Յանկայի է, ուրեմն, ինչպէս եւ յայտնել էր «Մուրճի» խմբագրութիւնը *), որ կարելոյն չափ շատ բժիշկներ երեւան հանէին իրանց կարծիքները, որպէ՛ս զի ժողովրդի համար այդ չափազանց կարեւոր հարցը իր ճիշտ ընթացքն ընդունէ: Աւելի եւս ցանկալի է, որ ինտելիգենս սարին պատկանող միւս մասնագէտներն էլ (իրաւաբան, գիւղատնտես, ինժեներ, բնագէտ եւ այլն) նոյնպէս ասպարէզ գային այս հարցով, որովհետեւ ժողովրդի տեսնական դուրսերը բարեխաւեր նոյն արժէք ունի, ինչ եւ նրա ֆիզիկական առողջութիւն պահպանելը:

Խօսենք բժիշկների մասին:

Նախ եւ առաջ պէ՛տ է ընդունել, որ «գալու գնալու» մասին խօսքը միայն գաղափարական իսկական ինտելիգենսի նկատմամբ կարող է լինել, որովհետեւ եթէ կեղծ ինտելիգենսը գնայ էլ, միեւնոյն է՝ պէ՛տ է նոյնպէս կեղեքէ ժողովրդին եւ, դիմակաւորուելով կոլտուրայի հովանաւոր ֆողով, օգտի փոխարէն միայն վնասէ...

Անցնենք այժմ խնդրի գործնական կողմին:

Ասում են, թէ գիւղերում բժիշկների կարիք շատ կայ, բայց այս վերջինները խոյս են տալիս գալուից: Անդրկովկասում ամեն մի գաւառ պարտադիր է ունենալ մի գաւառական եւ մի գիւղական բժիշկ. վերջինը կառավարում է հիւանդանոցը: Ե՞րբ էք լսել, որ այդ պատճօններից մէկն ու մէկը թափուր մնա: Իսկ դեպքեր, որ տեղացի բժիշկը մի քանի տարով մնում է սպասող պատճօնի եւ վերջը էլի մի եկուոր է նշանակւում—ի՛նչքան ու-

*) «Մուրճ», № 5, էջեր 314:

գեղ: Ինչո՞վ է մեղաւոր այսեղ տեղացի բժիշկը: Բայց բժիշկը կարող է գնալ եւ առանց պատժանապէս նշանակուելու, իբրեւ մասնաւոր պրակտիկով ապրող բժիշկ: Սակայն մեր գաւառներում շատ քիչ գիւղաֆաղաւներ եւ գիւղեր կան, որոնք ունենան աւելի քան 700—1000 տուն, այն ինչ շատ են գիւղեր, որոնք բնակիչների քիւր 50—120 տնից չէ անցնում, Ոչ-պատշաճով գնացող բժիշկին մնում է բնակել այն գիւղերը, ուր գաւառական կամ գիւղական բժիշկներ չը կան: Սակայն մի հանգամանք չը պէտք է մոռանալ այս դեպքում: Փոքր գիւղերում բժիշկը պէտք է իբրեւ վարձատրութիւն ստանայ ամեն մի հիւանդի առողջացնելու համար մի հաւ կամ 5 ձու, կամ մի երկու աբախ: Արդ, ցանկալի՞ է այդպիսի պետականացում բժիշկի համար: Դրան բացէ ի բաց կը պատասխանեինք, որ այդ կը նշանակէր ծաղրել գիտութիւնը, ստորացնել նրան մինչեւ «դալլափութեան» աստիճանը, իսկ բարոյականութեան գաղափարը ոտնակոխ անել:

Նքէ լաւ քննէք, կը տեսնէք որ բժիշկի արդիւնաւոր գործունեութեան համար անհրաժեշտ են հետեւեալ պայմանները.

Նախ՝ բժիշկը պէտք է անպատճառ տնտեսապէս ապահոված լինի, որպէս զի կարողանայ իր հեղինակութիւնը գործադրել. հակառակ դեպքում, երբ սկսուեց սակարկութիւն պացիէնտի հետ—այդ արդէն դառնում է ստորացնող առեւտուր եւ ոչ բժշկութիւն: Իսկ փոքրիկ գիւղը երբեք չէ կարող նիւթապէս այնպէս ապահովել, որ բժիշկը չը մտածէր նիւթականի մասին եւ նուիրուէր միայն՝ մաքուր գիտութեանը ծառայելու եւ մարդկութեան ցուերը քերտացնելու գործին: Նքէ հացի խնդրի համար բժիշկը այդ դեպքում տնտեսական միջոցների դիմի, պահանջի որ անպատճառ վարձատրուի իր չարչարանքը, չայցելի հիւանդին մինչեւ գոհացումն չը տրուի իրան եւ առհասարակ ամեն միջոց ձեռք առնի հարստահարելու գիւղացուն նրա կրօնականութեան րոպէին... այն ժամանակ բժիշկը կը լինի այդպիսի մարդը, քէ մարդասպան:

Երկրորդ՝ յայտնի է որ բժշկանանութիւնը առաջ է գնում հսկայական փայլերով. ոչ քէ օրերն են տալիս նոր գիտելիքներ, այլ ժամեր: Եւ ամեն մի գիւտի հետ երեւան են գալիս նորանոր բժշկական գործիքներ եւ գրքեր: Աղօտս գիւղացիների կամաւոր տուրքերից չնչին վաստակ ունեցող բժիշկը ի՞նչ միջոցներով ձեռք բերի այդ գործիքները եւ գրքերը, որոնք, ի դէպ է ասել, չափազանց քանգ են լինում: Իսկ ձեռք բերել հարկաւոր է, որովհետեւ դա պահանջում է հեղինակութիւն, ժողովրդին ծառայելու գաղափար: Առանց գործիքների եւ գրքերի բժիշկը նոյնն է, ինչ երկրագործը առանց գութանի եւ եզների:

Երբորդ՝ մենք ասացինք, որ գաւառին պէ՛տ է միայն գաղափարական ինտելիգենցներ: Մեր գաւառական կեանքը ներկայումս ամենակոպիւս, եսական ու նեղ մթնոլորտ ունի: Ժողովուրդը ասում է. «ծուկը ջրումը կը զարգանայ»: Գաղափարն էլ նոյնպէս՝ միայն գաղափարին նպաստող հանգամանքներում կարող է զարգանալ, իսկ նեղ եսական միջավայրում՝ պարզ է որ պէ՛տ է մեռնի: Գաղափարական մարդը գիւղական հանգամանքների մէջ, լինելով առանց օգնականի, առանց բարոյական յեմարանի եւ տնտեսական ապահովութեան, վերջապէս առանց մի անհասի, որ հասկանաւ, բնութեւն է օգնէր նրան այդ ծանր գործում, կարող է միայն մի տարի տանել իր ծանր վիճակը, որից յետոյ, եթէ նա չէ ուզում բաժանուել իր փայփայած գաղափարներից, պէ՛տ է հեռանալ գիւղից: Իսկ եթէ թոյլ է նստած նրա մէջ գաղափարը, նա կ'աւագ-կ'աւագ կ'ընկնի, կը մանրանայ եւ գաւառական կեանքի դասարկաբանութիւններով զբաղուող մի սովորական մարդ կը դառնայ: Գաւառական մթնոլորտը կը սպանի նրան բարոյապէս:

Այդպէս, ուրեմն, բժիշկների գաւառ չը գնալու պատճառը աւելի շուտ պէ՛տ է փնտել բնդհանուր տնտեսական-հասարակական պայմանների մէջ:

Բայց առաջ է գալիս մի հարց. այնուամենայնիւ ի՞նչպէս օգնել գիւղի ժողովրդին, ի նկատի առնելով յիշած բոլոր պայմանները եւ դրութիւնները: Թո՛ղ ժողովուրդը լինի տգէտ, աղիւտ, խեղճ... մի՞թէ պէ՛տ է արհամարհել եւ հեռանալ նրանից, հանգիւս խղճով նայել, ինչպէս հարիւրները եւ հազարները կոտորւում են առանց խնամքի: Ո՛չ եւ ոչ, կ'ասենք մենք. որովհետեւ նա, ժողովուրդը, չէ մեղաւոր իր ողորմելի դրութեան համար, այլ նրանից անկախ բնդհանուր հասարակական-տնտեսական հանգամանքները: Իսկ մենք որ հասկանում ենք այդ հանգամանքների ոյժը, գորութիւնը, պէ՛տ է գործնական միջոցներ ցոյց տալ ժողովրդին՝ այդ թուաւոր վիճակից ազատուելու համար: Հիւանդութիւնը, մեծ մասամբ, չ'աւտուրութեան ծնունդ է. տաս էիջ գիւղեր կը գտնուէ, ուր հարիւրներով չը լինեն հիւանդներ: Ուրեմն պէ՛տ է. եւ անպատճառ պէ՛տ է, օգնել նրանց: Բայց ի՞նչպէս...

«Այլ բան կը լինէր, եթէ ունենայինք գեմասօփներ», ասում է յարգելի բժ. Գ. Սարգսեանը: Անշուշտ: Բայց որովհետեւ չունենք գեմասօփներ, ուստի պէ՛տ է մտածել ներկայ պայմաններում հնարաւոր միջոցների մասին: Իմ կարծիքով, ներկայումս միայն մի եղբ կայ, այն է՝ որ ինքը, մեծ գիւղի հասարակութիւնը, կամ թէ մօտակայ 3—5 մանր գիւղերի հասարակութիւնները իրանք իրանց համախօսականներով որոշէին տարեկան 1500—2000 ռ.

յաշկացնել բժեկական գործին։ Այդ գումարը կարելի էր գործադրել մօտաւորապէս այսպէս. 1200 ռ. բժեկին, 300 ռ. ծառայի եւ բնակարանի։ Իսկ թէ ամեն մի գիւղական հասարակութիւն, կամ մի քանիսը միացեալ պծերով կարող են 2000 ռ. յաշկացնել իրանց անդամների կեանքը ապահովելու համար—այդ բանի մէջ ես համոզուած եմ, որովհետեւ եթէ ամեն դուրեքան մէջ, հարկաւոր դեպքում մի գիւղացի իր վերջին եզր ծախում եւ բոլոր հողն ու այգին չնչին գնով կապալով է տալիս, իր հիւանդ որդու կամ կնոջ բժեկելու համար պարզ է որ ոչ արտակարգ դեպքում նա կարող է դրա $\frac{1}{20}$ մասը գտնել։ Միջին թուով տարեկան մի տան վրայ կ'ընկնի 3 ռուբլի (եւթադրելով որ հասարակութիւնը բաղկացած կը լինի ոչ պակաս 700 անդ.)։ Թո՛ղ գիւղացին այդ վնասը տալ ամսէ ամիս, ամեն մի ամսին կ'ընկնի 25 կոպէկ։ Գործը կազմակերպել կարելի է նաեւ այնպէս, որ ունեւորը մի քիչ աւելի կը տա, աղքատը մի քիչ պակաս... մի խօսքով հարկաւոր է ինքնագնութեան սկզբունքին դիմել։

Այդ սխեմով բժիշկ ունենալը նոյնիսկ աւելի մեծ առաւելութիւն ունի, քան նշանակովի բժիշկ ունենալը. նախ՝ որովհետեւ կը հրաւիրուի տեղացի, որ ծանօթ կը լինի տեղական թէ՛ պայմաններին եւ թէ լեզուի հետ. երկրորդ՝ իրաւունքը իրան—ժողովրդին կը պատկանի. պարզ է որ եթէ նա տեսնի բժեկի անբարեխղճութիւնը, կը հեռացնի նրան եւ ուրիշին կը բերի։ Իսկ նշանակած «չինովներկ» բժեկի վերաբերմամբ ժողովուրդը չէ կարող այդ անել։

Մի հարց եւս. ամեն մի գաւառ իր 80—100 հազար ժողովրդով ունի այժմ 2 մշտական բժիշկ, յաճախ եւ աւելի՝ 3—4։ Ի հարկէ, 40—50 հազար ժողովրդի բժեկութեան պահանջներին մի բժիշկը դժուար կը կարողանայ բաւականութիւն տալ, բայց ցաւալին այն է, որ դրանք բաւականութիւն չեն տալիս նոյնիսկ այն գաւառական քաղաքի կամ գիւղի ժողովուրդին, որտեղ քաղաքում են։ Եւ եթէ ուզում էք, զանգասները աւելի շատ հեղեղում են այդտեղերից, քան բժեկագուրկ գիւղերից։ Եւ հասկանալի է. բացի նրանից որ նշանակովի բժիշկները մեծ մասամբ բաւականացնում են առ ի պատճօն, ձեւական զօրծուեցութեամբ, նրանք—լինելով բոս մեծի մասին ոչ-տեղացի, չեն կարողանում ըմբռնել տեղական պայմանները եւ դրանով մեծ վնաս են հասցնում բժեկութեան գործին։ Ոչ միայն տեղական լեզու չիմանալն է խոչընդոտ կանոնաւոր բժեկութեան, այլ եւ տեղական կենցաղավարութեան եւ սովորութիւնների հետ անծանօթ չը լինելը։ Զե՛ որ հիւանդութիւնը մեծ մասամբ տեսնական եւ կենսական պայմաններէ հետեւանք է. ուստի անհասկանալիցնել, ուսումնասիրել հիւանդ

օրգանիզմը անհրաժեշտ է կանոնաւոր բժշկութեան համար, իսկ այդ չէ կարող կատարուել, երբ բժիշկը անձանօք պայմաններում է սկսել գործել: Եւ վերջապէս ի՞նչպէս կարելի է կանոնաւոր բժշկութիւն անել, եթէ բժիշկը օրեկան ստիպուած է լինում ընդունել 80—100 հիւանդ, ինչպէս այդ մեր գիւղական հիւանդանոցներում է կատարուում:

Եթէ ուզում եմ դրական օգնութիւն հասցնել ժողովրդին, բաց արեմ կենսրոնական գիւղերում մեծ հիւանդանոցներ մի քանի տասնեակ մանակալներով, մի քանի բժիշկներով եւ բաւարար յարմարութիւններով: Այն ժամանակ քաղաքում դեգերող մեր բժիշկները կ'աղաչեն ու կը պաղատեն որ պաշտօն տաք իրանց այդ հիւանդանոցներում, բո՛ղ լինեն դրանք քեկուզ Հաջեւարում կամ մի ուրեւէ Հայքաղում...

ԲՃ. Վ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ .

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ